

բինոս և ո՛չ Թէոդորէտ տեղեկութիւն չեն տար թէ նշխարաց սրբապղծութենէն յետոյ ո եւ է մաս մնացած է Սերաստի մէջ, բայց Յերոնիմոս կը հաստատէ զայն իր կողմէ: Երբ ան Պաւղինէի հետ կ'այցելէ Սերաստ «Հոն, կ'ըսէ, թաղուած են Եղիսէ. Արդիւ եւ մեծն ի ծնունդս կանանց՝ Յովհաննէս Մկրտիչ մարգարէները: Պաւղինէ հոն վկայ եղած է այն բազմութիւ հրաշքներուն որ ձգած են զանիկա արհաւիրքի եւ սարսափի մէջ: Ան կը տեսնէր զեւերը զանազան կերպով տանջուած՝ մեծ աղաղակներ կ'արձակէին, սուրբերու գերեզմաններուն առջև զայլերու պէս կ'ոռնային մարդիկ, շուներու պէս կը հաջէին, կը սուլէին օձերու նման, կը մռնչէին ցուլերու պէս: Ոմանք իրենց գլուխները կը պտուտկէին և ետևի կողմով իրենց պարանոցը գետնին կը քսէին, կանայք իրենց ոտքերով կախուած կը մնային և անոնց հագած ըզգեստները չէին կենար իրենց գէմքին վրայ: Պաւղինէ կը կարեկցէր, կ'արտասուէր ամէնուն համար, հայցելով Աստուծոյ գթութիւնը»: Եթէ Յովհաննէս Մկրտչի գերեզմանը բռնաբարուած և պարպուած էր, հաւանական չէր որ դարձեալ այնքան ուշադրութիւն գրաւէր: Բռնաբարուած և պարպուած ըլլալը դժուարաւ կ'ընդունուի երբ Յերոնիմոսի՝ Մարկելայի գրած սահատուածը կարդացուի. «Երբ զայ այն օրը՝ առիթը ունենանք Սամարիա երթալով ուխտերնիս կատարելու Յովհաննէս Մկրտչի, Եղիսէի և Արդիւսի նշխարներուն»:

Որովհետև Յերոնիմոս Յուլիանոսի մահէն քսան

---

Յունիս 24 ին եւ Օգոս. 29 ին: Այս վկայաբաններ կը յիշատակուին Սաղիմօսիան Ծիսարոսին մէջ (տե՛ս, R. Bl. 1924, էջ 611 - 623):